regulation to the punctuation system. These and a number of other peculiarities suggest that in the basis of the syntactic system of the above mentioned compositions lies the prototype of the Modern Armenian syntax, which later would have been more normalized.

Խմբագրություն է ուղարկվել 01.07.19
Հանձնարարվել է գրախոսության 08.07..19
Տպագրության է հանձնարարվել 15.10.19

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՄԵԼԻՆԵ ԳԻԼԱՎՅԱՆ
Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
Բան. գիտ. թեկն., դոցենտ
gilavyan.meline@mail.ru

ԱՐՄԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԸ ՄԱՆԿԱԳԻՐ

Բանալի բառեր և արտահայտություններ. հեքիաթ, վանդակ, ծիածան, լույս, սունկ, կանաչ երկինք,ծաղկած այգի

Ключевые слова и выражения: сказка, каляска, радуга, свет, гриб, зельеное поле, синее небо, цветущий сад

Key words and expressions: fairy tale, cage, rainbow, light, mushroom, green field, blue sky, blown garden.

Հոդվածում քննության են առնվում նորագույն շրջանի հայ գրականության տաղանդաշատ բանաստեղծներից մեկի՝ Արմեն Մարտիրոսյանի մանկական բանաստեղծությունների դաստիարակչական, ճանաչողական նշանակության, գեղարվեստական յուրահատկությունների վերաբերյալ հարցերը:

Մասնավորապես նշվում է, որ բանաստեղծը անկեղծ զրուցում է իր մանուկ ընթերցողների հետ, լսում նրանց, նրանց պես հրճվում, ուրախանում, զարմանում, ինչը շատ կարևոր է մանկական գրականության համար:

Արմեն Մարտիրոսյանը 1960-ականներին գրականություն եկած այն բանաստեղծներից է, որոնք միանգամից հայտնվեցին քննադատության և ընթերցողիների լայն շրջանի ուշադրության կենտրոնում: Նրա առաջին բանաստեղծությունները տպագրվեցին <<Գարուն>> ամսագրում, որը մեծ

տեղ էր հատկացնում գրականության նախաշեմին կանգնած, որոշակի հույսեր ներշնչող երիտասարդ ստեղծագործություններին:

Սերնդի բանաստեղծներից քչերը՝ Յու. Սահակյան, Էդ. Միլիտոնյան, փորձեցին գրել նաև մանուկների համար, Արմեն Մարտիրոսյանն այդ քչերից մեկն էր, և պետք է արձանգրել, որ այդ բնագավառում նա կարողացավ ասել իր խոսքը, մանուկ ընթերցողների սեղանին դնել պատկերավորությամբ, մատչելիությամբ, ճանաչողական ու դաստիարակչական նշանակությամբ աչքի ընկնող բանաստեղծություններ, որոնցից շատերը տեղ են գտել դպրոցական դասագրքերում, ընթերցարաններում:

Արմեն Մարտիրոսյանի ընթերցողը նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաներն են, որոնց համար գրելը բավական դժվար է այն առումով, որ անհրաժեշտ է նրանց պես ուրախանալ, զարմանալ: Անհրաժեշտ է նաև կարողանալ ոչ թե լավի ու վատի, չարի ու բարու վերաբերյալ նրանց խորհուրդներ տալ, այլ անկեղծ զրույցի բռնվել նրանց հետ, լսել նրանց:

Սա նշանակում է, որ տաղանդավոր գրող լինելը անհրաժեշտ, բայց դեռևս ոչ բավարար պայման է մանկագրության բնագավառում:

Տաղանդավոր լինելուց բացի, պիտի նաև մանկավարժ ու հոգեբան լինել, կարողանալ հաշվի առնել ընթերցողների տարիքային զարգացման յուրահատկությունները, ճշգրտել հետաքրքրությունների շրջանակները, իմացության աստիճանը:

Այս առումով պատահական չէ, որ մեր մեծ գրողներից շատերը նույնիսկ փորձ անգամ չարեցին գրել մանուկների համար, թափանցել նրանց ներաշխարհը:

Պետք է նշել, որ մանկագրության բնագավառում ձեռք բերած հաջողությունների համար անչափ կարևոր է Արմեն Մարտիրոսյանի մանկավարժական կրթությունը: Մանկավարժական ինստիտուտում սովորելու տարիներին Արմեն Մարտիրոսյանը հնարավորություն է ունեցել շփվելու տարբեր տարիքի երեխաների հետ, ճանաչել նրանց, նրանց հետ զրուցել ինչպես հավասարը հավասարի հետ:

Մանկական բանաստեղծությունների ընդամենը երեք ժողովածուի հեղինակ է Արմեն Մարտիրոսյանը՝ <<Սկյուռիկ թագավորը>> (1976), <<Հեքիաթասաց սունկը>> (1988), <<Նկարիչ արևը>> (2004), որոնք, սակայն, հիմք են տալիս նրա մանկական բանաստեղծություններն արժևորել որպես համակարգ և անել տեսական եզրահանգումներ:

Թեմատիկ առումով Արմեն Մարտիրոսյանի բանաստեղծությունները համարյա չեն տարբերվում մյուս մանկագիրների ստեղծագործություններից (բնություն, հեքիաթների աշխարհ, թռչող գորգ,

հրեղեն ձի, հեքիաթասաց կենդանիներ ու բույսեր, իմաստուն պապիկ և այլն, բարց ունեն մի շարք յուրահատկություններ, որոնք ընդգծում են բանաստեղծի ինքնատիպությունը:

Ժողովածուների մի շարք բանաստեղծություններում բանաստեղծը կարողանում է համադրել հումորն ու քնարականությունը, քնարականությունն ու էպիկականությունը, իրական ու երևակայականը:

Երազում հայտնված ոսկե ձկնիկից երեխան խնդրում է իրեն հաշտեցնել տիկնիկի հետ (<<Ասի ձկնիկ խայտաբղետ, ինձ հաշտեցրու տիկնիկիս հետ. - դրանից էլ հեշտ բան, - ասաց).

Երբ արթնացա, ոչ դես ոչ դեն
Երգ էր ասում տիկնիկս արդեն,
Հա երգում էր, երգում անվերջ,
Երգը ոչ ծայր ուներ, ոչ վերջ,
Ինքն էր խոսում, գնում - գալիս,
Ինձ ժամանակ էլ չէր տալիս:
Ասի՝ տիկնիկ, էլ մի խոսիր,
Ասի՝ ձկնիկ, դու ինձ լսիր,
Գործերդ թող, լսի նորից
Փրկիր ինձ այս շատախոսից…[1]

Բանաստեղծը երեխաների առջև բացում է բնության հրաշալիքները, բնութագրական գծերով ներկայացնում կենդանիներին, այլաբանական պատկերներով նրանց վերագրում մարդկային հատկանիշներ.
<<Կետ արքան>> կարող է զանգահարել հեռախոսով.

Հենց խոսում է ջուր է ցայտում
Մեր տան կանչող հեռախոսից,
Ախ՛, էլ ինչ տուն,չի տարբերվում
Ալիք շնչող օվկիանոսից[2]:

Նա իր մանուկ ընթերցողի հետ ճանապարհորդում է <<Հեքիաթների երկրում>>, որտեղ երեխաներ են ապրում ու խաղալիքներ: Հեքիաթասացները խաղալիքներն են՝ գայլը, որ պատմում է նապաստակի մասին, արջը՝ մեղուների ու մեղրի, ունկնդիրները երեխաներն են, որ դժկամությամբ փակում են հեքիաթի դռները և գնում են քնելու: Քնում են նաև խաղալիքները:

[1] Մարտիրոսյան Ա., Հեքիաթասաց սունկը, Եր., <<Արևիկ>>, 1988, էջ 6;
[2] Նույն տեղում, էջ 29:

Կենդանիներին վերագրելով մարդկային հատկանիշներ՝ բանաստեղծը երեխաներին դաստիարակում է աշխատասիրությամբ, բարությամբ, հոգատարությամբ: Մրջյունն իրեն չի պատկերացնում առանց աշխատանքի ու տքնանքի.

Ինքը փոքրիկ մի մրջյուն,
Բեռը մի սար ահագին
Մեջքին այնպես է կպցնում,
Ասես հագուստ է հագին:

Արտաքին աշխարհում ամեն ինչ զարմանալի է երեխաների համար ու հրապուրչ, և դա է երեխային կապում գրքի հետ: Բեռան տակ կքված մրջյունը մերթ աջ է նայում, մերթ՝ ձախ: Ի՛նչ է փնտրում. գուցե տուն չունի, գուցե երեխան նրա համար մի բուն փորի բակում.

Ինչ ես մրջյուն կորցրել
Որ փնտրում ես շարունակ
-Ոչինչ էլ չեմ կորցրել
Զուր ես մանկիկ, ինձ կանչում,
Գիշեր լինի, թե ցերեկ
Առանց բեռի բեռի ինչ մրջյուն:

Երեխան ամպին համեմատում է իր պապի հետ, ով անչափ բարի է, հոգատար.

Մեր տուն արի, ամպ իմ ծերուկ
Իմ պապիկն էլ քեզ պես բարի՝
ՈՒնի ճերմակ հոնք ու մորուք,
Մինչև հիմա ամպ էր թե ծեր՝
Աչքերը՝ խոր արցունքի ծով….

Ճանաչողական տեսանկյունից մի սքանչելի բանաստեղծություն է <<Թութակն ու վանդակը>>: Երեխան զարմանում է, որ թութակը տխրում է վանդակում.

-Քեզ ինչ է պակասում,-
Ասում եմ
Ծլվլան թութակին վանդակի.-
Կեր ,խմիր,,քեֆ արա ու երգիր,
Վանդակի ճաղերն էլ քեզ համար
Ինչ պակաս են ճյուղեր ու երկինք..

Թութակի ու երեխայի երկխոսության միջոցով բանաստեղծը վերջինիս առջև բացում է նրա համար դեռևս անհասկանալի դռներ.ուտել-

խմելը չէ կարևոր թռչունների, կենդանիների, նաև մարդկանց համար. կարևորն ազատությունն է, որին հասնելու համար թևեր են պետք.

- Ինձ կապույտ երկինքն է պակասում
Եվ մեկ էլ օրորը անտառի,
Որ անվերջ կանչում են, թե՝ արի,
Թե՝արի,իմ թութակ ու թառիր
Անձրևի խոնարհված ճյուղերին:
…..Բացում եմ վանդակը ,որ թռչի՝
Իր սիրած երկինքը շնչելու,
Բայց խեղճը, կարծեսթե, թութակ չի,
Գնում է անկյունում ննջելու,
Եվ տխուր նայում աչքերիս,
Եվ տխուր նայում է ու ասում,
- Վանդակում ծնվել եմ,
Վանդակում սնվել եմ,
Երկինքում ինձ պահող
Թռիչքի թևերն են պակասում[3]:

Շատ հետաքրքիր են Արմեն Մարտիրոսյանի մանկական բանաստեղծությունների պատկերաստեղծման եղանակները: Նրա բանաստեղծությունները լուսավոր են, պայծառ, երեխաների համար գրավիչ՝ իրենց գունագեղությամբ, գունային տարբեր նրբագծերի համադրումներով: Ամեն ինչից լույս է ճառագում, նույնիսկ արևը հրաշագեղ ցուցահանդես է բացում.

Ինչ որ արավ ,արևն արավ,
Իր շողերով գույներ տարավ
ՈՒ գույները մեկ-մեկ վառեց,
Ծիածանի աչք նկարեց:
Ինչ որ արավ, արևն արավ,
Պապիկներից հոնքեր տարավ,
Իրար վրա վրա հոնքեր շարեց
Եվ երկնքում ամպ նկարեց:
Հոնքեր առավ,ամպեր փռեց,
Գույներ առավ, աչք նկարեց,
ՈՒ տես, հիմա ինքն է լողում
Իր նկարած կապույտ ծովում:

[3] Նույն տեղում, էջ 8:

Թեքվում է աջ ու նկարում,
Թեքվում՝ է ձախ, գույներ շարում.
Վրձին-շողով ամենատես
Բացեց մի մեծ ցուցահանդես[4]:

Արմեն Մարտիրոսյանն իր մանուկ ընթերցողներին տանում է մի զարմանահրաշ մոլորակ, որտեղ կողք կողքի հաշտ ու խաղաղ ապրում են բնության բոլոր շնչավոր արարածները, ուր չկան կեղծիք, սուտ, խաբեություն;

Բանաստեղծը մանկանում է, երեխաների հետ ուրախանում ու զարմանում է, ոչ թե խորհուրդներ է տալիս, այլ սրտաբաց զրուցում նրանց հետ:

Մ. Գիլավյան

Արմեն Մարտիրոսյանը մանկագիր

Ամփոփում

Հոդվածում քննության են առնվում նորագույն շրջանի հայ գրականության տաղանդաշատ բանաստեղծներից մեկի՝ Արմեն Մարտիրոսյանի մանկական բանաստեղծությունների դաստիարակչական, ճանաչողական նշանակության, գեղարվեստական յուրահատկությունների վերաբերյալ հարցերը:

Մասնավորապես նշվում է, որ բանաստեղծը անկեղծ զրուցում է իր մանուկ ընթերցողների հետ, լսում նրանց, նրանց պես հրճվում, ուրախանում, զարմանում, ինչը շատ կարևոր է մանկական գրականության համար:

М. Гилавян

Армен Мартиросян как детский писатель

Резюме

В статье исследуется детская поэзия современного армянского поэта Армена Мартиросяна. В творчестве поэта утверждаются системы моральных и нравственных ценностей. Он с удовольствием ведет разговор с маленьким читателем, слушает их, с ними радуется, удивляется, это является одним из важнейших условий детской литературы.

[4] Նույն տեղում, էջ 42:

M. Gilavyan

Armen Martirosyan as children's writer

Summary

In the article there are studied educational, cognitive and fictional characteristics of poems for children by very talented writer Armen Martirosyan. Especially, it is mentioned that the writer. sincerely, talks to his readers, listens to them, feels happy with them, wonders, which is very important for children's literature.

Խմբագրություն է ուղարկվել 01.07.19
Հանձնարարվել է գրախոսության 08.07..19
Տպագրության է հանձնարարվել 15.10.19

ԵՎԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ
Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
Բան. գիտ. թեկն., դոցենտ
mnacakanyaneva@mail.ru
ՌՈԶԱ ԽԱՐԱԶՅԱՆ
Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
Մանկ. գիտ. թեկն., դոցենտ

ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ

Բանալի բառեր և արտահայտություններ. Հովհ. Թումանյան, ժողովրդական բանահյուսություն, բանաստեղծություն, գրական մշակում, մանկական գրականություն, դաստիարակչական արժեք:

Ключевые слова и выражения: Ов. Туманян, фольклор, стихотворение, литературная обработка, детская литература, воспитательная ценность.

Key words and expressions: H. Toumanyan,, folklore, poetry, literary arrangement, children's literature, educational value.

Գաղտնիք չէ, որ ժողովրդական բանահյուսությունը մշտապես եղել է Հ. Թումանյանի տարերքի և հետաքրքրությունների կարևոր ասպարեզ: Նա ոչ միայն բարձր է գնահատել հայ ժողովրդի բանարվեստը՝ համարելով այն ազգային մտածողության, հոգեկերտվածքի, աշխարհընկալման հաստատուն գործոն, հայ բանաստեղծության զորացման հիմնական աղբյուր, այլև բազմիցս օգտվել է հարազատ ժողովրդի հոգևոր անսպառ գանձարանից: Ամբողջապես համազգալով հարազատ ժողովրդի մտածողության ու հոգեբանության յուրաքանչյուր դրսևորում՝ Թումանյանը